տեսակցելու իրավունքից ու, բացի այդ, պարզ չէ նաև, թե որքան կարող է շարունակվել [redacted] գործով դատաքննությունը, ապա պատասխանողի մատնանշած հանգամանքը կարող է իրականություն դառնալ այն մասով, որ Հայցվորի և երեխաների միջև կապվածությունը կարող է իսպառ վերանալ: Տվյալ պարագայում արդեն հայցի տեսականորեն բավարարման պայմաններում կարող է դժվարություններ առաջանան դատական ակտի կատարման համար, այն տեսանկյունից, որ երեխաների մոտ հոր նկատմամբ կապվածության բացակայությունը կարող է դժվարություններ ստեղծել դատարանի կողմից սահմանված ենթադրյալ տեսակցության կարգի կատարմանը:

Նման պայմաններում, հետագայում դատական ակտի կատարման նկատառումներից ելնելով և ավելորդ դժվարությունների վերացման համար գտնում է, որ անհրաժեշտ է մինչև սույն գործով կայացվելիք դատական ակտի կայացումը և օրինական ուժի մեջ մտնելը սահմանել տեսակցության միջանկյալ կարգ, որպեսզի չվերանա երեխաների կապվածությունը հոր հետ, որն էլ հետագայում կարող է հանգեցնել դատարանի կողմից կայացվելիք դատական ակտի չկատարման:

Օրենսդիրը, որպես հայցի ապահովման միջոց, սահմանել է նաև պատասխանողին որոշակի գործողություններ կատարելն արգելելը: Պատասխանողի դրսևորած գործողությունների արդյունքում ըստ էության Հայցվորին արգելվում է տեսակցել իր երեխաների հետ:

Ելնելով վերոգրյալից, Հայցվորի ներկայացուցիչը դատարանից խնդրել է արգելել պատասխանողին՝ հայցվորին երեխաների հետ տեսակցելն արգելելը, և մինչև սույն գործով դատական ակտի կայացումը կամ դրա օրինական ուժի մեջ մտնելը սահմանել [redacted] կողմից իր երեխաների՝ 15.01.2012թ. ծնված [redacted] տեսակցելու և նրա հետ շփվելու կարգ՝ յուրաքանչյուր շաբաթ ժամը 11:00-ից մինչև կիրակի 20:00-ն՝ գիշերակցով, իսկ 02.03.2015թ. ծնված [redacted] տեսակցելու և նրա հետ շփվելու կարգ՝ յուրաքանչյուր շաբաթ և կիրակի՝ ժամը 11:00-ից մինչև 20:00-ն:

Քննության առնելով Հայցվորի ներկայացուցչի միջնորդությունը, գտնում եմ, որ այն պետք է բավարարել մասնակիորեն՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ միջոցներ է ձեռնարկում հայցի ապահովման համար, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը կամ հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի վիճակի վատթարացմանը: Հայցի ապահովումը թույլատրվում է դատավարության ցանկացած փուլում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ հայցի ապահովման միջոցներն են՝ պատասխանողին որոշակի գործողություններ կատարելն արգելելը:

Փաստում եմ, որ նմանատիպ գործերի քննությունը միջինը տևում է 6-8 ամիս, հետևաբար, մինչ գործի քննության ավարտը հորը և երեխաներին՝ միմյանց տեսակցելու և շփվելու հնարավորություն չտալը կարող է հանգեցնել երեխաների՝ հոր հետ կապվածության նվազման կամ վերացման, ինչը կարող է դժվարացնել կամ անհնարին դարձնել կայացվելիք դատական ակտի կատարումը:

Բացի այդ, գտնում եմ, որ 6-8 ամիս շարունակ հորը և երեխաներին՝ միմյանց տեսակցելու և շփվելու հնարավորություն չտալն իր մեջ պարունակում է երեխաների հոգեկան, հոգևոր և բարոյական զարգացմանը վնաս հասցնելու իրական վտանգ, որը երեխաների շահերի առաջնային պաշտպանության սկզբունքի ոտնահարում է, ինչն անթույլատրելի է: